«ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ ՄԱՏՅԱՆԻ» ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ*

ԺԱՆ ՊԻԵՌ ՄԱՀԷ (Ֆրանսիա)

Կարող է անսպասելի կամ նույնիսկ անիմաստ թվալ «Մատյանի»[1] կառուցվածքով հետաքրքրվելը, տեսնելով, թե գրությունը ոչ մի պատմողական տարր չունի, որ կարողանանք սկիզբը, մեջն ու վերջը ջոկել։ Ընդհակառակը, Նարեկի խոսքը բնորոշվում է անընդհատ և բազմազան կրկնություններով։ Չէ՞ որ միևնույն վերնագիրը՝ «Ի խորոց սրտի խաւսք ընդ Աստուծոյ» կարդացվում է Մատյանի 95 գլուխներից յուրաքանչյուրի սկզբում։ Իսկ այդ վերնագրին կցված է երկրորդ գլխից սկսյալ 94 անգամ միևնույն բացատրությունը. «վերըստին յաւելուած կրկին հեծութեան նորին հսկողի առ նոյն աղերս Մաղթանաց Բանի»։ Մակերեսային ընթերցողը կարող է այնպես ընկալել, թե գլուխները հաջորդում են իրար, պատահական հերթականությամբ և նույնանման բովանդակությամբ։ Ինչպես բազմիցս նկատվել է բանասերների կողմից և վերջերս Վենետիկում լույս տեսած Գ. Պլըտյանի ուշագրավ ուսումնասիրությունում՝ «Մատյանի երկայնքին կրկնումը կրանի այլազան կերպերու տակ։ Բառային համահնչյունություն, նույնարմատ կամ համանուն արմատներու առընթերակցում, հոմանիշներ, ավելադրություններ, թվարկումներ, նույնաձև, նույնակառույց նախադասություններ և մտքերու վերադարձ՝ կրկնումի սկզբունքին արդյունքներն են»[2]։

Այդ սկզբունքը խարսխված է, մեր կարծիքով, «Մատյանի» դրական սեռի վրա։ Մատյանը սոսկ պոեմ կամ լոկ գեղարվեստական երկ չէ։ Հեղինակը նպատակ չունի լսողի կամ ընթերցողի միայն միտքն և ուշադրությունը գրավել՝ իրեն ինչևէ պատգամ հաղորդելու համար, այլ ավելի շատ ուզում է սրտերը փոխել, ոգիները զարգացնել, որ գրքի զանազան գլուխները դառնան «սպեղանիք զաւրաւորք վիրանց անբժշկանաց, դեղք ազդողականք ցաւոց անտեսականաց, հնարաւորութիւնք բազմամասնեայ երկանց վտանգից»[3] (վերնագիր)։ Մի խոսքով, «Մատյանն» ունի ոչ միայն քերթողական բնույթ և իմաստասիրական թեքում, այլև խրատական, հորդորական կամ, ավելի ճիշտն ասած, հոգեվարժական նշանակություն։ Այդ վարժության մայրն է կրկնությունը։ Հոգին վարժեցնելու համար անհրաժեշտ է հաճախ անդրադառնալ նույն գաղափարների և առարկաների։ Սակայն վարժությունը իզուր չի կարող լինել։ Հետևաբար, ինչքան էլ կրկնես, պետք է նաև առաջադիմես դեպի որոշակի նպատակ։ Ուստի

---

* Կարդացված է իբրև զեկուցում Միջնադարյան հայ դրականությանը նվիրված միջազգային առաջին գիտաժողովում, 1986 թ. սեպտեմբերին։

1 Օգտվում եմ Երևանում լույս տեսած ուշագրավ բնագրերից, թարգմանություններից և աշխատանքներից, որոնք վերջին տարիներս շատ են թեթևացրել «Մատյանի» ուսումնասիրությունը։ Սրանք են՝ Մատյան ողբերգության։ Տաղեր, թարգմանություն Վազգեն Գևորգյանի. Երևան, 1979 (աշխարհարար թարգմանությամբ մեջբերումները, այսուհետև՝ Նարեկացի, 1979)։ Մատեան ողբերգության. աշխատասիրությամբ Պ. Մ. Խաչատրյանի և Ա. Ա. Ղազինյանի. Երևան, 1985 (գրաբար մեջբերումները, այսուհետև՝ Նարեկացի, 1985)։ Գ. Բ. Թ ո ս ո ւ ն յ ա ն, Է. Լ. Դ ե մ ի ր ճ յ ա ն. Հայկական համաբարբառ, 8։ Գ ր ի գ ո ր Ն ա ր ե կ ա ց ի. Մատեան ողբերգութեան. 3 հատոր, Երևան, 1975—1978։

2 Գ. Պ լ ը տ յ ա ն. Գրիգոր Նարեկացի լեզվի սահմաններուն մեջ. Վենետիկ, էջ 32։

3 Ն ա ր ե կ ա ց ի, 1985, էջ 245, վերնագիր։

և այդպիսի նպատակ պետք է ունենա նաև Գրիգոր Նարեկացու Մատյանը, աչքի ընկնող բոլոր կրկնություններով հանդերձ։

Թեպետև շատ դժվար է երկի ներքին կարգը միանգամից ըմբռնել, բայց կարելի է ելնել հեղինակի իսկ հաղորդած տեղեկություններից։ «Ստացեալ հիմնեցի, կառուցի, կարգեցի, կուտեցի, արժանացուցի, դիզի, բարդեցի, կացուցի, ցուցի հաստատելով ի հրաշակերտութիւն միագոյ իրի ղբաղմաստեղնեան դրուագս դրութեան այսմ սոփերի արգասաւորի, ես՝ Գրիգոր կրաւնաւոր քահանայ, յետին բանահիւսաց և կրտսեր վարժապետաց»[4],—կարդում ենք «Մատյանի» հիշատակարանում։ Ըստ այդմ, դրությունը, ինչքան էլ բարդ և բազմաստեղնյան լինի, բայց միագոյ և միատարր է, համակարգ կառուցվածքով, որը կարելի է համեմատել հաստատ հիմունքների վրա կանգնած հրաշակերտ արձանի հետ։

Գրիգորն այստեղ ավելին ոչինչ չի ասում իր երկի կառուցվածքի մասին։ Սակայն «Մատյանի» ուշադիր քննությունը ցույց է տալիս, որ բաղկացած է երեք մասից, որոնք նմանվում են որոշ չափով միջնադարյան տաճարի շեմքին, սրահին և խորանին։

Վաղուց է նկատվել, թե «Մատյանի» 34-րդ, 75-րդ, 92-րդ և 93-րդ գլուխները շատ տարբեր են մնացածներից։ Տարբերությունը մի քանի հատկանիշներից է կախված։ Նշված գլուխների ոճը նվազ քերթողական և արձակին ավելի մոտիկ է, քան թե մնացածներինը։ Դավանաբանական կամ աստվածաբանական բովանդակությամբ դրանք առանձնանում են Գրիգորի սովորական մաղթանքներից և խոստովանություններից։ Այնքան ինքնուրույն են այդ գլուխները, որ Նարեկացու գիտահամեմատական բնագրի կազմողները մնացածների պես չեն տողատել, այլ միակտոր են տպագրել, արձակի պես։ Իսկ 1369 թ. Վարազում «Մատյանն» արտագրող Ստեփանոս Արտամետցին 34-րդ գլխի երկրորդ հատվածից առաջ նկատում է. «Գրեցաւ յերից գրոցս զմի գիրքս առաջին», իսկ 74-րդ գլխից հետո. «Արդ գրեցաւ կարողութեամբն Այ երկրորդ գիրքս սբ վրդպետին Գրիգորի Նարեկայ, ձեռամբ յոգնամեղ և անարհեստ գրչի՝ Ստեփաննոսի, յիշատակ ինձ և ծնողաց իմոց»[5]։ Ջենք կարող ճշտել, թե որտեղից է առաջացել «Մատյանի» երեք գրքերի այդ բաժանումը. կարող է լինել հեղինակայի՞ն, թե՞ պետք է համարել հետագա գրչի խմբագրական վերաբերմունքի արգասիք։ Հարցը մնում է առկախ, բայց կարևորն այն է, թե վերոհիշված 34-րդ և 35-րդ գլուխները, ինչպես ժամանակակից, նույնպես միջնադարյան ընթերցողների կողմից համարվել են «Մատյանի» ներքին մեծ մասերի սահմաններ։

Արդ, ի՞նչ է այդ բաժանումի նշանակությունը։ Գիտահամեմատական բնագրի կազմողներ Ա. Ղազինյանն ու Պ. Խաչատրյանը հիմնականում ճիշտ են կռահել, թե «Մատյանի» հարուստ և բազմաշերտ բովանդակությունը կառուցվածքորեն խարսխվում է միջնադարյան աշխարհայեցողության երեք հիմնական հենասյուների՝ հավատի, սիրո և հույսի գաղափարների արծարծման և մարմնավորման վրա»[6]։ Իրոք, այսպես կոչված երեք «աստվածաբանական առաքինությունները» թվարկված են այդ նույն հերթականությամբ Նարեկի 10-րդ գլխում[7] (որը մեջ եմ բերում Վ. Գևորգյանի սքանչելի թարգմանությամբ). «Քանզի, արդարև տեսությունն հստակ, իմաստությունը կատարելագույն, մտերմությունը երկնավորի հետ, ճանաչումն Աստծո, մասն են հավատքի, Այդ երջանիկ ու ընտիր անվան, որ ժառանգվելով մնում է հավետ անեղծ անխափան՝ որպես պատվակից սիրո և հույսի»[8]։ Որոշ չափով կարելի է ասել, թե «Մատյանի» առաջին մասը վերաբերում է մարդու դարձին դեպի Աստծուն, այսինքն դեպի հավատքը, և վերջանում է 34-րդ գլխի հավատքի խոստովանու-

4 Նույն տեղում, էջ 642, հիշատակարան։

5 ՄՄ, ձեռ. № 5883, էջ 159ա, 339 բ։ Տե՛ս Նարեկացի, 1985, էջ 46, 183, 184։

6 Նարեկացի, 1985, էջ 183։

7 Նույն տեղում, էջ 283, գլ. 10, 4։

8 Նարեկացի, 1979, էջ 60։

թյամբ։ Երկրորդ մասը վերաբերում է գլխավորապես Աստծու սերը ցույց տվող երախտիքներին, օրինակ՝ Քրիստոսի փրկական կրքերին և արարքներին, հայտնի մեղավորներին շնորհված քավությանը, եկեղեցական խորհուրդներին ևն։ Այդ մասը վերջանում է ներկա և ապագա շնորհքները բաշխողի՝ մայր եկեղեցու փառաբանությամբ։ Երրորդ մասը վերաբերում է գալիք դատաստանին և փրկության հույսին։ Վերջանում է հարության առավոտվան սպասող բանաստեղծի հուսալից աղոթքով. «Արեգակն արդար ճառագայթ օրհնեալ, Լուսոյ կերպարան, փափագ անձկութեան, Բարձրեալ անքնին, գաւրեդ անպատում, Բարւոյ բերկրութիւն, յուսոյ տեսութիւն,... Շնորհաւք քո, գթած, ի քեզ ղաւրացեալ՝ քև նորոգեցայց , Ջատեալ ի մեղաց, անմահ կենդանութեամբ՝ ի յարութեան արդարոց, Հաւր քում աւրհնեցեալ»[9]։

Սակայն այդքանով չի բացատրվում «Մատյանի» կառուցվածքը, որովհետև հեղինակի իսկ կարծիքով, հավատքը, հույսը և սերը իրարից անբաժանելի են։ Հետևաբար ոչ թե առանձին առանձին են գործում «Մատյանի» երեք մասում, այլ ամբողջ երկում՝ սկզբից մինչև վերջն են հիշատակվում մերթ միասին, մերթ հերթականորեն։ Նարեկի ներքին կարգը լավ ըմբռնելու համար նախընտրելի է, իմ կարծիքով, մի ուրիշ բացատրություն։ Առաջին մասն անժխտելիորեն նախապատրաստական բնույթ ունի, ուրեմն, եթե ամբողջ «Մատյանը» տաճար է, ապա այդ տաճարի շեմքը կամ գավիթն է հանդիսանում։ Գավիթը որպես հայկական միջնադարյան ճարտարապետության բնորոշ տիպ տարածված է եղել X—XIX դդ.[10]։ Սակայն, շինության տիպից անկախ, Կանոնագիրքը միշտ հրամայել է, որ ապաշխարություն անող մեղավորները որոշ ժամանակ «առ դրանն ընդ ձեռամբ»[11] մնան եկեղեցին մտնելուց առաջ։ Այդպիսի պարագայի ակնարկելով, Գրիգորը գրում է եկեղեցու մասին, թե «այնքան մեծ ունի սրբութիւն, մինչ զի զորս ըստ պատկերի Աչ եղեն՝ կանոնաւ խտրէ։ Յետ յօգուտ ընտրութեանց փորձից թէ համարձակեսցէ մարդ ոք սխալեալ ի զաւիթս նորին մտանել՝ ո՛չ պղծի, այլ ընդ անպատրաստիցն թերութեանց դժուարի»[12] կամ էլ, հերձվածողների մասին. «...հերքեալ ի միջոյ, ի բաց հալածեմք... փակեմք ընդդէմ նոցին զկենացն մուտ եկեղեցական ԳԱՒԹԻ»[13]։

«Մատյանի» երկրորդ մասում, եկեղեցու գավթում կամ շեմքին խոստովանելուց հետո, Գրիգորը, կարծես թե, խոստովանում է հավատքը և մտնում է տաճար, որտեղ խորանում է Հին և Նոր կտակարանների գիտության միջ և մասնակցում է խորհուրդներին։ Երրորդ մասում, թեպետև Նարեկացին երբեք չի նկարագրում ո՛չ դրախտը, ո՛չ դժոխքը, բայց այնքան հաճախ է խոսք լինում ապագա դատաստանի մասին, որ կարծես թե խորանի վարագույրից, այսինքն տեսանելի երկնքից[14] այն կողմը՝ աներևույթ աշխարհի շեմքին է անցել։

Այդ կարծիքը հաստատելու համար անհրաժեշտ է մանրամասնորեն անդրադառնալ «Մատյանի» ամեն մի մասի կառուցվածքին։ Առաջին մասը սկսվում է ընդարձակ խորագրով, որի առաջին բառն է ըստ չորս ձեռագրի «դրութիւնք», իսկ ըստ բոլոր մնացածների՝ «դրունք»[15], ինչ կարելի է այն իմաստով հասկանալ, թե «Մատյանի» «հրաշակերտութիւնը» դուռ ունի տաճարի պես, կամ ինքն իսկ է դուռ «յոգնաթախանձ բանից օգտակարաց», որ կարող է բացել «դրունք ողորմութեանց»[16]։

---

9 Նարեկացի 1985, էջ 639—641, գլ. 95։

10 Տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, հ. 2, էջ 697 («Գավիթ»)։

11 Վ. Ա. Հակոբյան. Կանոնագիրք հայոց, հ. Ա, Երևան, 1964, էջ 171։

12 Նարեկացի, 1985, էջ 551 գլ. 75, 9։

13 Նույն տեղում, էջ 389, գլ. 34, 9։

14 Նույն տեղում, էջ 382, գլ. 33, 6։

Ch. Mercier. Les canons des conciles oecumêniques et locaux en version arménienne. REArm N. S , 15, 1981, p. 213.

15 Նույն տեղում, էջ 245 (վերնագիր) և 975։

16 Նույն տեղում, էջ 515 գլ., 67, 3։

Այդ «դուռն» անցնելուց հետո կարելի է առանձնացնել չորս ենթաբաժին. ա) նախ և առաջ առաջին ինը գլուխներում Գրիգորը բացատրում է գրքի նպատակները։ Դատաստանի առաջ ունեցած արհավիրքը զսպելով, որոշում է խոստովանել ոչ թե բոլոր ախտ ու մեղքերը, որոնք անհամար են և մտովին անգամ անընդգրկելի, այլ միայն գլխավորները[17]։ բ) 10—18-րդ գլուխները սահմանում են մարդկային ոգու վերականգնումի կամ փրկության պայմանները. առաջին հերթին անհրաժեշտ են աստվածաբանական երեք առաքինությունները՝ հավատքը, հույսն ու սերը։ Դրանց մեջ բերվում են Աստվածաշնչից քաղված օրինակներ (10—14)։ Դրանից հետո բնութագրվում է բժիշկ Քրիստոսի փրկարար գործունեությունը (15—18)։ գ) 19—28-րդ գլուխներում Գրիգորը սովորում է ողբալ՝ չարիքից հրաժարվելու և քավություն ստանալու համար։ Չարիքի պատճառը ոչ թե Աստված, այլ մարդու ապստամբ անձնիշխանականն է։ Ուրեմն պետք է մարդկային սնապարծությունը խոնարհեցնել և անձնական թերություններին նայել թափանցիկ հայացքով։ Այդ գործին կարող են նպաստել բանաստեղծության բնորոշ միջոցները՝ այլաբանությունը և ամենից առաջ հանգն ու նմանաձայնությունը։ Օրինակ, 21-րդ գլխում, ոգին քայքայող ախտերը համեմատվում են ուտիճի հետ, իսկ 23—26-րդ գլուխները հայ բանաստեղծության առաջին հանգավոր երկերից են։ Սակայն Գրիգորի կարծիքով ամենից հոգեպարարն է տողերի սկզբում ու վերջում միևնույն բառը՝ «մեղա» շարունակ կրկնել, ինչպես իսկ պատահում է 27-րդ գլխում։ Միայն այդ մեթոդով է բանաստեղծին հաջողվում «դիվական ջերմատենդը սաստել... որպեսզի փախչի մարդուց՝ զարհուրած»[18]։ դ) 29—34-րդ գլուխներում Գրիգորն ապաշխարություն է անում, մասնակցում հաղորդության խորհրդին (32-րդ գլխում), ներկայանում սուրբ պատարագին (33-րդ գլխում) և խոստովանում հավատքը հոծ բազմության առջև (34-րդ գլխում)։ Այդպես ավարտվում է «Մատյանի» առաջին մասը, որը, բառի բուն նշանակությամբ, ներածական բնույթ ունի, որովհետև իրոք, ընթերցողի ձեռքից բռնած, Գրիգորը սովորեցնում է դատաստանի երկյուղը զսպել և ներածում է տաճարի մեջ։

Շատ ավելի բարդ է երկրորդ մասի կառուցվածքը։ Աչքի է ընկնում, թե որոշ գլուխներում հեղինակը մեկնաբանել է Հին և Նոր կտակարանների երկար դրվագներ, մինչև անդամ ամբողջական գրքեր. օրինակ՝ Սաղմոսարանը՝ 60—61 գլուխներում, Բանք ժողովողի և Սողոմոնին վերագրված ուրիշ գրություններ՝ 48-րդ գլխում, Քրիստոսի կրքերը՝ 36 և 66 գլուխներում են, պարզ է, որ Գրիգորը ուղղում է խոսքը ավելի վարժված ընթերցողի և բոլորովին չի վարանում աստվածաբանական և սուրբգրագիտական դժվար գիտելիքներ հաղորդել։

Իմ կարծիքով կարելի է զատորոշել չորս ենթաբաժին. ա) 35—44-րդ գլուխներում հակադրվում են ներկայիս բաշխվող Աստծու շնորհի և ապագա դատաստանի գաղափարները. բ) 45—53-րդ գլուխներում արծարծվում է այդ հարցը նախ անհատի, իսկ 50-րդ գլխից՝ ամբողջ մարդկության տեսանկյունից, թե ինչպես կարելի է, մեղավորի հոգում, Աստծու այն պատկերն ու նմանությունը վերանորոգելը, որը եղել է սկզբում՝ արարչության ժամանակ, ըստ Գիրք Ծննդոցի. գ) 54—63-րդ գլուխներում քննարկվում է, թե ինչ արժեք կարող է ունենալ նորանոր հանցանքներ գործող մարդու աղոթքը։ Քրիստոսը նախատեսել է, որ մարդը պետք է նորից մեղանչի քավություն ստանալուց հետո։ Հետևաբար, հարկավոր է ոչ թե արդարությամբ հպարտանալ, այլ մեղքերի խոստովանքը նվիրել, թշնամիների համար աղոթել և անձնական անարժանությունը գիտակցելով հանդերձ՝ Դավիթ սուրբ թագավորի և մարգարեների ավանդած մաղթանքներն արտասանել. դ) 63—74-րդ գլուխներում Գրիգորը բացատրում է, թե լավ է հիմա ինքնապարսավ լինել և բոլոր թերությունները մերկացնել, քան թե լուռ մնալ՝ դատաստանի օրվանը սպասելով։ Այն ժամանակ միանգա-

---

17 Նարեկացի, 1979, էջ 40, գլ. 6, 3։

18 Նույն տեղում, էջ 172, գլ. 28, 5։

մից ամեն ինչ կհայտնվի և ոճիրները թաքցնող հանցավորն անողոքաբար կդատապարտվի, մինչդեռ անկեղծ խոստովանողը, հենց հիմա, դատարանից նախօրոք կաղատվի։ Բայց, ըստ միջնադարյան մտածելակերպի, կանխավ դատապարտելու կամ աղատելու իրավունք ունի եկեղեցին, որի փառաբանությամբ ավարտվում է «Մատյանի» երկրորդ մասը։

Երրորդ մասը վերաբերում է աշխարհի վերջին օրվան և նոր կյանքի ակնկալությանը։ Կարելի է առանձնացնել երեք ենթաբաժին. ա) 76—79-րդ գլուխներում նկարագրվում է նոր աշխարհի հանդես դալը։ Նոր լույս է ծագել ավագ ուրբաթ օրը, հետևաբար հավատացյալները պետք է նորոգվեն, իսկ հին աշխարհը պետք է ընկնի. բ) 80—83-րդ գլուխներում խնդրվում է Աստվածածնի, հրեշտակների, առաքյալների, մարտիրոսների և բոլոր սրբերի միջնորդությունը ոչ միայն Գրիգորի, այլ նրա բարեկամների և թշնամիների համար։ Քերթողական միջոցներով «Մատյանի» այս հատվածն ընդօրինակում է միջնադարյան նկարչությունում տարածված Դեյսիսի, այսինքն աղերսանքի տեսարանները. գ) 84—95-րդ գլուխը կարծես թե անցավոր ժամանակը թողած հավերժություն են մտնում աստիճանաբար։ Արտասանելով առավոտվա աղոթքը (84), Գրիգորը խնդրում է, որ Աստծու օգնությամբ իր սկսած գործերից և առաջարկած նպատակներից երբեք չշեղվի (85)։ Մաղթում է ներումն ստանալ իր կյանքի երեք հասակներին (87) և լսվել նույնիսկ իր մահվանից հետո՝ «Մատյանի» միջոցով, մինչև աշխարհիս վերջին օրը (88)։ Վերջին անգամ խոստովանում դեպի Քրիստոսն ունեցած հավատքը (89, 90). երեկոյի աղոթք է ասում (91, 94), զարթնում է հարության աներեկ առավոտը (86, 95)։

Մատյանի այդ վերջին գլուխներին կցվել են 92-րդ և 93-րդ գլուխները, որոնք այնքան երկար են և այնքան տարօրինակ բովանդակություն ունեն, որ հմուտ բանասերները կարծել են, թե այդ գլուխները «Մատյանին» չեն պատկանել, այլ պատահաբար են դրան միացվել հետագա տգետ գրիչների կողմից։ Այդ կարծիքը հերքել են Ա. Ղազինյանը և Պ. Խաչատրյանը, ուստի և դրան անդրադառնալու կարիք չկա[19], նկատենք միայն, թե խորհրդանշական իրենց խրթին իմաստով այդ երկու գլուխները սերտ կապ ունեն մեռելոց հարության միջնադարյան գաղափարի հետ։ 92-րդ գլխում փառաբանված ժամհարը համեմատվում է խաչի՝ այսինքն կենդանության ծառի հետ։ Նրա ձայնով մարդը զարթնում է դիվական քնից՝ մահվանից։ Իսկ 93-րդ գլխում դրվատվող սրբալույս մյուռոնը համարվում է անմահության օծում, մշտնջենական երանության առհավատչյա։

* * *

Մատյանի կառուցվածքի այս հակիրճ տեսությունը ցույց է տալիս, որ մնացած գլուխներից ձևով և բովանդակությամբ տարբերվող 34-րդ, 75-րդ, 92-րդ և 93-րդ գլուխները ոչ միայն պատկանում են պոեմին, այլ ընդգծում են դրա հիմնական բաժինները։ Այդ հանգամանքից ելնելով կարելի է, թերևս, մի վարկած առաջարկել Նարեկացու գլուխգործոցը երբ և ինչպես ստեղծվելու մասին։ Հիշատակարանում Գրիգորը պատմում է, թե կազմել է «Մատյանը» «ի յաւարտումն կատարման իններեակ յոբելինին, ի սկիզբն պսակելոյ մտի տասնեկին յաբեթական տոհմիս տումարի»[20], այսինքն 1002 թ.։ Այն ժամանակ հոռոմոց մեծ կայսրը՝ Բարսեղը, Տայքի շրջանները գրավեց և ընդոտնեց եկեղեցու թշնամիներին՝ այսինքն թոնդրակեցիներին[21]։ Գրիգորը, ինչ խոսք, դրանից կարող էր միայն ուրախանալ թե՛ որպես իշխանազուն և թե՛ որպես վարդապետ, դասակարգային և կրոնական պատճառներով։ Ոչ միայն ուրախացավ, այլև մասնակցեց պայքարին գաղափարական զենքերով, հորինելով հակաթոնդ-

19 Նարեկացի, 1985, էջ 1111։

20 Նույն տեղում, էջ 642, հիշատակարան։

21 Նույն տեղում, էջ 389, գլ. 34, 10։

ռակյան ճառեր, որոնց թվին պետք է դասել «Մատյանի» 75-րդ, 92-րդ և 93-րդ գլուխները։ Թոնդրակեցիները մերժում էին եկեղեցու նյութական շենքը և եկեղեցական խորհուրդները։ Արդ, Գրիգորը ոչ միայն գովում է եկեղեցին (75), այլև եկեղեցու ամենաշնչին գործիքը՝ ժամհարը (92) և ամենապատվավոր խորհուրդը՝ մյուռոնը (93)։ Չի կարելի բացառել, որ 34-րդ գլուխը նմանապես հակաթոնդրակյան նպատակ է ունեցել, բայց դրական նշան չեմ գտել այդ ենթադրությունը հաստատելու համար։

Հետևաբար շատ հավանական է, որ Գրիգորը «Մատյանի» 75-րդ, 92-րդ, 93-րդ և թերևս 34-րդ գլուխները գրել է 999 և 1002 թթ. միջև, «յայնմ անդորրության միջոցի, յորում եղերեալ ընդոտնեցան թշնամիք եկեղեցւոյ»[22]։ Բայց կարո՞ղ ենք արդյոք պատկերացնել, որ մնացած 91 գլուխները ստեղծվել են միևնույն ժամանակաշրջանում։ Այնքան բերրի և հանճարեղ բանաստեղծ է եղել Գրիգորը, որ կարող էր, անշուշտ, շատ կարճ ժամանակվա մեջ հիանալի գործ կատարել։ Սակայն «Մատյանն» այնպիսի մի անհուն երկ է, որ ամփոփում է ոչ միայն մի անհատի ամբողջ կյանքը, այլև ամբողջ ժողովրդի, ամբողջ մարդկության հոգևոր փորձառությունը։ Ուստի և ավելի հավանական եմ համարում մի ուրիշ վարկած։

34-րդ գլխում Գրիգորը հաղորդում է, թե «բազմաւք պաղատեցայ տրուատաւք (կամ, ըստ հնատիպ գրքերի՝ դրուակաւք) խանդաղատականաւք, որ ոչ դրեալ ի յայս կարգ ձայնի»[23]։ Կարելի է այդ նախադասությունն այնպես ըմբռնել, թե «Մատյանը» կազմելուց առաջ հեղինակը հորինել է շատ դրվատիքներ կամ դրվագներ, որոնք բաց է թողել, նպատակահարմար չհամարելով մնացածներին միացնել։ Եթե ճիշտ է այդ նկատողությունը, ապա պետք է զատորոշել առանձին գլուխները ստեղծելու և դրանք «Մատյանում» ժողովելու ժամանակները։

984 թ., հորինելով Ապարանքի սուրբ խաչի պատմությունն ու դրան կցված Սուրբ Խաչի և Աստվածածնի ներբողները, Գրիգորը տիրանում է քերթողական ձիրքի բոլոր միջոցներին։ Հաջորդ քսան տարիների ընթացքում գրում է ոչ միայն մնացած ներբողները, թերևս գանձերից և տաղերից մի քանիսը, այլև, հավանաբար, զանազան առիթներից առաջացած, իրեն համար վերապահված, կամ Հովհաննես եղբորը և Նարեկավանքի աբեղաներին ուղղված առանձին դրվագներ, որոնք հետագայում կհավաքվեն «Մատյանում»։

Այդ դրվագները հորինելու առիթների մասին բնագրից իսկ կարելի է իմանալ։ Առաջին հերթին եղել են Գրիգորի առօրյա ընթերցումներն ու խոկումները։ Երինակ, 77-րդ գլուխը գրվել է ավագ ուրբաթ օրը։ 53-յդ գլխում բանաստեղծը մեջ է բերում Եղիշեի մի հատված, որի հետ չի համաձայնվում։ 27-րդ գլխում կարծես թե նայում է Քրիստոսի պատկերին, իսկ 20-րդ գլխում ասում է, թե Քրիստոսն անձամբ երևացել է իրեն տեսիլքում։ Երկրորդ՝ հեղինակը որոշ գլուխներ է գրել եղբորը մխիթարելու համար, որի մասին նշվում է 51-րդ գլխում, թե «ինքն է կարոտ փնտրելու անդորր սեփական անձին»[24]։ 12-րդ գլխի նման դրվագներ կարող են իրոք հորինված լինել Հովհաննեսի անձկությունները փարատելու համար։ Երրորդ՝ որոշ գլուխներ ուղղված են եղել հատկապես աբեղաներին։ Օրինակ, 72-րդ գլխում Գրիգորը պատմում է, թե «Անախորժութեամբ լսեցի անպարտ մեկի բերանից խոսքն այս անհարմար՝ ուղղված հենց նրան, որի առաջ և ոչ մի երկրածին մարդ արդարանալ բնավ չի կարող։ Ջշնացա ու չպոռնկացա երբեք իմ կյանքում... սա էլ է կոչվում անօրենություն»[25]։ Այդ անհամեստ խոսքն ասողը եղել է անշուշտ ոչ թե աշխարհիկ մարդ, այլ խոնարհություն կոչված առաքինությունը չիմացող աբեղաներից

---

22 Նույն տեղում, էջ 642, հիշատակարան։

23 Նույն տեղում, էջ 389, գլխ. 34, 10։ Բնագրագիտական հարցի մասին տե՛ս էջ 104,2, ծան. 13։

24 Նարեկացի, 1979, էջ 302, գլ. 51, 1։

25 Նույն տեղում, էջ 441, գլ. 72, 2։

մեկը։ Վանականները պարտավոր են եղել ամեն շաբաթ ամբողջ Սաղմոսարանը կարդալ։ Այդ առիթով են գրվել 60-րդ և 61-րդ գլուխները։

Վերջապես, որոշ գլուխներ վերաբերում են Գրիգորի և ժողովրդի հանդիպումներին։ Օրինակ, 3-րդ գլխում նկարագրվում են միջնադարյան Հայաստանի հասարակության զանազան շերտերն ու դասակարգերը։ 33-րդ գլուխը հորինվել է մարդկանց հոծ բազմության առջև մատուցված պատարագի առիթով։ 72-րդ գլխում Գրիգորը գանգատվում է, թե ժամանակակիցները կոչել են իրեն բաբի, սուրբ և բարի. իրոք, կարելի է ենթադրել, որ սրբության համբավը լայն էր տարածվել՝ վտանգելով իր հոգեկան անդորրությունն ու համեստությունը։

Ընդարձակ վերնագրից իմանում ենք, որ «Մատյանը» կազմվել է «ի խնդրոյ հայցման հարց միանձանց և բազմաց անապատականաց»[26]։ Բանն այն է եղել հավանաբար, որ 1002 թ., երբ որ Գրիգորն ուզել է հրատարակել Բարսեղի հակաթոնդրակյան արշավանքի առիթով իր գրած ճառերը, Նարեկավանքի աբեղաները ոչ միայն առիթից օգտվել են բանաստեղծին հորդորելու, որ ժողովածուի ձևով հավաքեր և հրատարակման պատրաստեր նաև ավելի մտերիմ բնույթ ունեցող իր ստեղծած «ի խորոց սրտից խաւսք ընդ Աստուծոյ», այլև այդ գործում իրեն օգնելու համար նշանակել են հարազատ եղբորը՝ Հովհաննեսին, ինչպես իմանում ենք հիշատակարանից[27]։ Այդ ժամանակ է Գրիգորը հղացել «Մատյանի» կառուցվածքը, Հովհաննեսի քարտուղարությամբ հավաքելով և խմբագրելով արդեն հորինված նյութերը, նոր գլուխներ ստեղծելով և հակաթոնդրակյան ճառերից օգտվելով երկի գլխավոր բաժանմունքները նշելու համար։

Այսպես կարելի է բացատրել, մեր կարծիքով, «Մատյանի» միաժամանակ «բազմաստեղանի» և «սակավամասնյա» կառուցվածքը, պատմական այժմեականության հետ ունեցած սերտ կապերը և անժամանակ, համամարդկային, մշտնջենավոր նշանակությունը։

---

26 Նարեկացի, 1985, էջ 245, վերնագիր։

27 Նույն տեղում, էջ 642, հիշատակարան։